

**ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ  
(2005-2017ի Ամփոփ Պատկեր)**

Վեր. Յարութիւն Սելիմեան  
hselimian@gmail.com

Սուրիոյ Հայ Աւետարանական համայնքը հոգեւոր-մշակութային ու ազգային-հայապահպանական իր գործունէութեամբ մնայուն ու ակնառու ներկայութիւն եղած է գաղութիս կեանքէն ներս: Այդ դերը առաւել ընդգծուած ու նշանակալի դարձած է յատկապէս 1990ականներէն ի վեր, երբ իր աճող գործունէութեամբ համայնքը դարձած էր ազգային կեանքի ընդհանուր համակարգին կարեւոր մէկ լծակը: Համայնքը կը ներառնէ Հալէպը, Հոմսը, Դամասկոսն ու Քեսապը, իբրեւ վերին դեկավար ու պատասխանատու մարմիններ ունենալով Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Կեդրոնական Մարմինը, Հայ Աւետարանական Համայնքի Համայնքային Գործադիր Մարմինը, Հայ Աւետարանական Համայնքի Կրթական Խորհուրդը: Նշեալ մարմինները կը հսկեն ու կը կազմակերպեն համայնքին ո՛չ միայն հոգեւոր-կրօնական, այլեւ ուսումնակրթական ու մշակութային գործունէութիւնը:

Այս տեղեկագիրը նպատակ ունի ընդհանուր ակնարկով մը անդրադառնալ համայնքէն ներս տարուած բազմաբնոյթ ու բազմատեսակ գործունէութեանց՝ 2005-2017 շրջանին, եւ յատկապէս ծանրանալ Սուրիոյ պատերազմի առաջին վեց տարիներուն համայնքային իշխանութիւններուն տարած աշխատանքին՝ ի բարօրութիւն ու ապահովութիւն վտանգի գօտիին մէջ յայտնուած ժողովուրդին:

Համայնքին մէջ տարուող աշխատանքները անընդհատ գործընթաց են, սակայն, նկատի առնելով որ պատերազմին հետ կեանքի բնականոն հոլովոյթին կտրուկ փոփոխութիւնը իրեն հետ բերաւ նոր ռազմավարութեան պահանջք՝ 2005-2017ին Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքին (ՍՀԱՀ) գործունէութիւնը պայմանականօրէն կը բաժնենք երկու՝ 2005-10՝ նախապատերազմեան, 2011-17՝ պատերազմական շրջաններու:

Կազմաւորուելով Սուրիա հաստատուած տարագիր հայութեան առաջին իսկ ռզորումներու շրջանին՝ 1922էն ի վեր ՍՀԱՀն հաւատարիմ մնաց իր նախորդներու դաւանած հիմնական սկզբունքներուն՝ համայնքի զաւակները քրիստոնէական ճշմարիտ հաւատքի լոյսին մէջ պահել, ազգին տալ համաշխարհային գիտական յառաջընթացքին հետ քայլ պահելու ունակ, գիտութեամբ զինուած, քաղաքակիրթ, հայեցի ու քրիստոնէական դաստիարակութեամբ սերունդներ: Եթէ անցնող տարիներու հոգեւոր,

կրթամշակութային պատմությունը ամանդական դարձած աշխատանք է, միշտ «հաւատարիմ հիմնադիր հայրերու կտակին»՝ «Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի կազմուիլ եւ ո՛չ ուրիշ բան», ապա վերջին ամիլի քան քսանամեայ շրջանը անդադար վերելքի անխոնջ ջանք ու զաղութային իրականութեան բոլոր ասպարէզներուն մէջ իր արդար տեղը հաստատելու ճիգի դրսեւորում է:

ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՇՐՋԱՆ, 2002-10

#### **Ա. Քրիստոնէական դաստիարակութեան ոլորտ**

2002ին, Վեր. Յարութին Սելիմեանի հովուական շրջանին բացուած Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնը եղաւ ու ցարդ կը շարունակէ մնալ այն վայրը, ուր կը տարուի քրիստոնէական դաստիարակութեան բազմաբնոյթ աշխատանք, կը լսուի, կը մեկնաբանուի ու կը սերտուի Աւետարանին Խօսքը: Հոն կը կատարուին կիրակնօրեայ դպրոցի<sup>1</sup>, պատանի-ասպետներու<sup>2</sup>, Ք.Ջ. Երիտասարդաց եւ տիկնանց պաշտամունքներ, Աստուածաշունչի սերտողութիւններ, կիրակնօրեայ դպրոցներու ուսուցիչներ եւ պատանեաց ու երիտասարդաց առաջնորդներ պատրաստելու դասընթացքներ, Աստուածաշունչի դասեր, տիկնանց զանազան դասընթացքներ, լեզուներու եւ համակարգչային դասընթացքներ, նաեւ երիտասարդ զոյգերու հոգեմտաւոր կրթութեան համար դասախօսութիւններ եւ այլ ձեռնարկներ: 2002էն ի վեր, Բեթէլ Եկեղեցիին հովանաւորութեամբ, փոքրիկներու համար կը գործէ նաեւ Ամառնային Սուրբ Գրոց Վարժարանը, ուր առաւել հաճելի ձեւով կը մատուցուին հոգեւոր նիւթեր, ազգային ու հոգեւոր երգեր, հայոց պատմութիւն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն, համակարգչային գիտելիքներ, մարզանք, խաղեր, պտոյտներ, ձեռային աշխատանք, զարգացման մրցումներ, թատրոն, պարի դասեր, անուշեղէնի պատրաստութեան դասապահեր, տեսաերիզի ցուցադրութիւն դաստիարակչական նիւթերու: Ծրագրի ամառտին սաները իրենց ստացած գիտելիքներն ու ունակութիւնները կը ցուցադրեն յատուկ կազմակերպուած հանդէսի ընթացքին:

#### **Բ. Ուսումնակրթական ոլորտ**

ՍՀԱՀԻ Կրթական Խորհուրդի մշտական ուշադրութեան ներքոյ է կրթական գործը, իր ենթակայութեան տակ գտնուող դպրոցներու եւ ուսումնակրթական, ե՛ւ շէնքային խնդիրներու կարգաւորումը:

2003ին հրատարակուած պետական հրամանագիրով Սուրիոյ տարածքին գործող բոլոր նախակրթարանները վեցամեայի փոխարէն անցան պարտադիր իննամեայ դրութեան: Այդ հնգամեակին, Ուսումնական Խորհուրդը որոշեց օգտուիլ այս կարգադրութեան ընձեռած հնարաւորութենէն՝ ի նպաստ հայեցի ու քրիստոնէական

դաստիարակութեան: Նկատի առնելով որ հայ աշակերտութեան թիւը թոյլ կու տար այս ծրագիրը իրագործել Բեթել Վարժարանին մէջ՝ Ուսումնական Խորհուրդին ջանքերը ուղղուեցան այդ կողմ, որուն շնորհիւ 2003-2004 կրթըջանի շրջանաւարտները այնուհետեւ իրենց ուսումը շարունակեցին հարազատ կրթօճախին մէջ<sup>3</sup>:

Համայնքի բոլոր զաւակները ներառնելը եւ հայ աշակերտութեան թիւը բարձրացնելը կը մնային հրամայական պահանջք: Այդ ուղղութեամբ կատարուած միջոցառումներէն էր կրթաշրջանի սկիզբին ծանուցումը թէ այլ առաւելութիւններու կարգին 2006-07 կրթաշրջանին համար բողբոջ կարգ ընդունուող մանուկները պիտի ստանային 100%, իսկ մանկապարտէզի ու դպրոցի մնացեալ կարգերու աշակերտները՝ 50% կրթանպաստ: Տարուած ջանքերը պսակուեցան յաջողութեամբ: Միւս կողմէն, պրէտէի պետական քննութիւններուն աշակերտութեան ապահոված փայլուն յաջողութենէն քաջալերուած, ու առաւել բարձր դիրքի հասնելու ձգտումով՝ Ուսումնական Խորհուրդը կատարեց երկրորդականի անցնելու առաջին քայլը՝ Ժ. դասարանը յայտարարուեցաւ բացուած:

2009 Հոկտեմբերին բացումը կատարուեցաւ դպրոցաշէնքի նորակառոյց երրորդ յարկին, որ նոյն ատեն դպրոցի ամբողջական երկրորդական դառնալուն հաւաստումն էր: Շնորհիւ պատկան մարմիններու անդով ջանքերուն՝ Բեթել Վարժարանը դարձաւ ՍՀԱՀի միակ երկրորդական վարժարանը (Ալեքիփօ Քոլէճի կողքին), որ իր ամէնամեայ ձեռք ձգած փայլուն արդիւնքներով մինչեւ օրս Հալէպի հայկական ճեմարաններու մէջ առաջնութեան պատուաւոր դիրքերը կը կիսէ:

#### **Գ. Մշակութային ոլորտ**

Հալէպի Հայ Աւետարանական Համայնքը միշտ ալ եռանդուն գործունէութիւն ծաւալած է մշակութային ոլորտին մէջ, զայն նկատելով հայապահպանութեան հիմնական ազդակներէն մին՝ նոր սերունդին մէջ գեղարուեստական ճաշակ սերմանելու, զանոնք ազգային մշակոյթի հոգեկերտիչ ոլորտին մէջ պահելու, նաեւ մարդակերտումին մէջ արուեստին բացառիկ դերը նկատի առնելով: Այս տեսլականով առաջնորդուած, 1987էն ի վեր, երջանկայիշատակ համայնքապետ Վեր. Պարգեւ Աբարդեանի հովանաւորութեամբ գործող Երախտիք Երգչախումբը ցայսօր կը շարունակէ իր առաքելութիւնը իր մանկապատանեկան ու չափահասներու խումբերով, ղեկավարութեամբ՝ Տիկ. Շողակաթ Աբարդեան-Սելիմեանին<sup>4</sup>: Երգչախումբին գործունէութիւնը մեծապէս ամբողջացուց ու կարելոր բաց մը լեցուց 2006ին հիմնուած Արմիս Երաժշտանոցը<sup>5</sup>:

Միս կողմէն, աշակերտները ինքնուրոյն ընթերցումի մղելու եւ հայեցի ոգիով դաստիարակելու ի խնդիր, 2006ին Շիրաճեան Սրահին մէջ բացուեցաւ նաեւ գրադարան-ընթերցարանը:

ՊԱՏԵՐՈՒՋՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ, 2011-2017

Այս շրջանին ԱՀԱՀի մէջ իրագործուած աշխատանքին ամէնէն հիմնական քանի մը բնագաւառներու միայն պիտի անդրադառնաք այստեղ:

#### **Ա.- Ընկերային ծառայութիւն**

2011ի գարնան, Սուրիոյ մէջ բռնկած գործողութիւնները կարճ ժամանակի մէջ վերածուեցան լայնատարած պատերազմի, տակաւ ընդգրկեցին երկրին շրջանները, եւ անոնց բնակչութիւնը դուրս մնաց պետական հսկողութեան ծիրէն: 2012ին Հալէպը ինկաւ պաշարումի օղակին մէջ: Արտաքին աշխարհին հետ հաղորդակցութեան դադրեցումով կամ անկանոնացումով, ծնունդ առին տնտեսական, ընկերային, կենցաղային այլեայլ խնդիրներ: Հալէպի հայաշատ կարգ մը թաղամասեր յայտնուեցան ըմբոստներու կողմէ գրաւուած տարածքներուն մէջ, ուրիշներ վերածուեցան ճակատային դիրքերու, մշտական հրթիռակոծութեան թիրախ դառնալով: Խուճապահար բնակչութեան մէկ մասը գաղթեց, ուրիշներ անցան ծովափնեայ ապահով վայրեր: Նոյնպէս եւ հայերը: Մնացող շատ ընտանիքներ, հրթիռակոծումի հետեանքով բնակարանէ զրկուելով - կամ վտանգէ խուսափելու համար - այլ թաղամասեր կամ համայնքապատկան շէնքեր ապաստանեցան: Մեծապէս նուազեցաւ հալէպահայութեան թիւը, որ նոյնպէս ազդեց հալէպահայ կեանքի բնականոն հոլովոյթին վրայ: Նման պայմաններու մէջ, յատկապէս գաղութը պահպանելու ի խնդիր, հրամայական պահանջք էր անյապաղ կազմակերպել գաղութին մէջ տակաւին մնացող հայութեան կեանքը հնարաւոր չափով ապահովելու գործը, գէթ թեթեւցնելով պատերազմի հետեանքով ծագած տնտեսական ու կենցաղային կարիքները: Հայ Աւետարանական Համայնքը չէր կրնար անտարբեր մնալ: Ընդհակառակը, ան շատ արագ կազմակերպուեցաւ ու ստեղծեց ժողովուրդի կարիքները հոգալու մարմիններ, պատրաստ ըլլալով ե՛ւ միւս համայնքներու հետ գործակցաբար ե՛ւ նաեւ ինքնուրոյնաբար դիմագրաւել դժուարութիւններն ու բոլոր անակնկալները, որոնք կրնային հրամցնել պատերազմական օրերը: Ընկերային Ծառայութեան Յանձնախումբը, անմիջական հսկողութեամբը համայնքապետին, կարեւոր գործ կատարեց. պատերազմի բոլոր տարիներուն նպաստ ստացան համայնքին պատկանող թէ այլ համայնքներու զաւակ աւելի քան 300 ընտանիքներ, առանց խտրութեան:

ա) **Սննդեղէն.**- Տրուած ըլլալով, որ Հալէպի շրջափակումի առաջին տարին, ժողովուրդը մատնուեցաւ սննդեղէնի տագնապի՝ Ընկերային

Ծառայութեան Մարմինը կարիքատուներուն շտապ կերպով սննդեղէնով ապահովելու առաջին քայլը նախաձեռնեց: Առաջին այս քայլը յետագային կանոնաւորուեցաւ, դարձաւ պարբերական ու բաշխումը ստացաւ մասնակի ուղղորդումներ, ինչպէս՝ առաջին անհրաժեշտութեան սննդեղէն ընտանիքներու, կաթի բաշխում՝ մանուկներ ունեցող ընտանիքներու, կտրօն՝ որոշակի հանրախանութ սննդեղէն գնելու եւն.: Իսկ իրաքանչիւր Ս. Ծննդեան, Ս. Յարութեան կամ Ամանորի տօներուն ժողովուրդին յաւելեալ սննդեղէն ու այլ նուէրներ բաշխուեցան, յատկապէս այնպիսի սննդեղէն, առանց որոնց հայ ընտանիքը չի պատկերացներ իր տօնական սեղանը: Նպատակը ո՛չ միայն նիւթեղէն սնունդ հայթայթելն էր, այլեւ մարդոց տրամադրութիւնը բարձրացնել ու զգացնել, որ համայնքային ղեկավարութեան մշտական հոգածութեան մէջ են իրենք: Այս եւ բոլոր նպաստաբաշխումները կատարուեցան մշակուած, կանոնաւոր ու փափկանկատութեամբ:

բ) **Դրամական նպաստ.**- Դրամական նպաստը բաշխուեցաւ գլխաւորաբար հետեւեալ անուանումներու տակ՝ տարուան մէջ 4-5 անգամ համալսարանականներու՝ իբրեւ կրթանպաստ, դպրոցականներու կրթանպաստ, 2013էն սկսեալ ամսական դրութեամբ՝ հայ համայնքի ընտանիքներուն, անապաստան ընտանիքներու տունի վարձք, ելեկտրականութեան եւ վառելիքի վճարում, ուսուցիչներու՝ ծանր պայմաններու տակ իրենց պարտականութեան մէջ չթերանալու իբրեւ քաջալերանք, այրիներու եւ անկարներու օժանդակութիւն, բժշկական վիրահատութիւններու, հրթիռակոծութեան ենթարկուած բնակարաններու նորոգութեան...:

գ) **Ջրաբաշխում.**- Հալէպի պաշարումին անմէնէն աղիտալի երեւոյթներէն մին, հրթիռակոծումէն ետք, ջրի սակաւութիւնը կամ՝ յաճախակի երկարաժամկէտ չգոյութիւնն էր: Ամէն մարդ ի վիճակի չէր թաղերու մէջ փորուած հորերէն, կամ շրջող ջրաբաշխ մեքենաներէն օգտուիլ: Այս պայմաններուն մէջ համայնքը եւս ունեցաւ շրջիկ մեքենայ, որ եկեղեցւոյ հորէն ջուր կը մատակարարէր կարիքատուներու: Կը մատակարարուէր նաեւ ըմպելի ջուր, իսկ փափաքողները կը ստանային նաեւ ջուր ամբարելու տակառներ:

դ) **Կենցաղային այլազան պէտքեր.**- Յարաճուն սղութեան պատճառած դժուարութիւնները նուազեցնելու նպատակով ստեպ կը բաշխուէր նաեւ մաքրութեան անհրաժեշտ օճառեղէն, անձեռոցներ եւ քիմիական նիւթեր, վառելանիւթ կազ եւն., մեծերու եւ մանուկներու ծմեռնային տաք հագուստեղէն ու անկողնային պարագաներ (բարձ, ծածկոց եւն.): Որպէսզի այրիներ կամ միայնակ կանայք ունենան սեփական աշխատանքով դրամ շահած ըլլալու գոհունակութիւնը՝ Ընկերային Ծառայութեան Յանձնախումբը ասանոց տրամադրեց բուրդէ թելեր ու անոնց հիւսուածքին համար վարձատրեց:

ե) **Մանուկներն ու ծերերը.** Պատերազմը սերունդ մը զրկեց իր անհոգ եւ ուրախ մանկութենէն. անոնք ապրեցան ցուրտի ու խաւարի, մահուան սարսափի ու այլ զրկանքներու մէջ: Այս չարիքը մեղմելու նպատակով մանուկները յաճախ զուարճալի ժամանցներու հաւաքուեցան, անոնց համար կազմակերպուեցան նախաճաշերու եւ ճաշերու հաւաքներ, խաղեր, երգ, տրամախօսութիւններ, պտոյտներ ու պար, նուէրներ ու օրուան ընթացքին՝ ուտելիք:

Իսկ տարեցներու՝ նիւթական օգնութեան հետ բաշխուեցան դեղեր, անոնց ապահովուեցաւ ակնոց, յաճախակի եղան նաեւ Ազգային Ծերանոց եւ Պատասպարան այցելութիւնները: Ընկերային ծառայութեան ամէնէն անակնկալ եւ ուշագրաւ ձեռնարկներէն էին պատերազմական ծանր պայմաններու տակ Հալէպը յարաբերաբար մաքուր պահող բոլոր աղքատացիները, ելեկտրական ընկերութեան ծառայող պաշտօնեաները (աւելի քան 200 հոգի) տարբեր օրերու հրաւիրելն ու զանոնք պատուելը ճաշով ու նիւթապէս:

զ) 2013ին գործել սկսաւ նորաբաց Բեթէլ Բուժման Կեդրոնը, ուր անվճար դեղօրայք ստացաւ քաղաքի ռեւէ բնակիչ՝ անկախ իր ազգութենէն ու կրօնքէն: Կեդրոնը կը ներառէ ներքին հիւանդութեանց, սրտի, շաքարախտի, մանկաբուժութեան, կանացի, ընդհանուր վիրաբուժութեան, ոսկրային, միզային, մորթային, ջղային, քիթ-կոկորդ-ականջի, ականաբուժային եւ ճառագայթաբանութեան ծառայութիւնները:

## **Բ. Կրթական ու քրիստոնէական դաստիարակութիւն**

Գաղթերու հետեւանքով պակսեցաւ նաեւ հայ աշակերտութեան թիւը: Միւս կողմէն, կարգ մը դպրոցներ, որոնք կը գտնուէին վտանգաւոր շրջաններու մէջ, հարկադրուեցան այլ շրջան տեղափոխուիլ ու առաւել աննպաստ պայմաններու մէջ շարունակել դպրոցական դասաւանդութիւնը: Բեթէլ Վարժարանը իր աշակերտութեան առջեւ բաց պահեց իր դռները ամբողջ պատերազմի ընթացքին՝ հակառակ խիստ վտանգաւոր պայմաններուն: Հրթիռներ ինկան դպրոցին ե՛ւ բակը, ե՛ւ մասնաշէնքերուն վրայ, սակայն, ինչպէս քաղաքի մնացեալ հայկական դպրոցները, նոյնպէս Բեթէլը չընկրկեցաւ՝ առաւել արիւթիւն ներարկելով ծնողներուն, որ չդադրեցնեն իրենց զաւակներուն ուսումնառութիւնը: Սակաւ օրեր, պետական որոշումի հիմամբ, դադրեցան դասաւանդութիւնները, իսկ մնացեալ պարագաներուն հերոսական էր ե՛ւ աշակերտութեան, ե՛ւ ուսուցչական ու վարչական կազմերուն պահուածքը: Այդ միասնական նուիրումին ու ջանքերուն շնորհիւ, դժուարագոյն պայմաններու մէջ, Բեթէլի աշակերտութիւնը յաջողեցաւ միշտ առաջին կարգեր նուաճել թէ՛ պրէտէի, թէ՛ պաքալորէայի պետական քննութիւններուն: Չդադրեցաւ նաեւ Արմիս Երաժշտանոցին դասաւանդութիւնը. ռումբերու եւ հրթիռներու ձայներուն տակ աշակերտ եւ

ուսուցիչ գիտության ու արուեստի միջոցով իւրօրինակ պայքար մղեցին չարիքին դէմ:

Յիշատակելի է նաեւ, որ պատերազմի օրերուն հայ աւետարանական վարժարանները հրատարակեցին իրենց տարեգիրքերը: 2017 կրթաշրջանին տեղի ունեցաւ Սուրիոյ Հայ Աւետարանական Կրթական Խորհուրդին հրատարակած *Տարեգրութիւն Հայ Աւետարանական Բեթէլ Վարժարանի* նորատիպ հատորի շնորհանդէսը, որ նուիրուած էր Հայոց Ցեղասպանութեան 100ամեակին:

Պատերազմի օրերուն զուգահիւսեցաւ նաեւ Հայ Աւետարանական Բեթէլ Երկրորդական Վարժարանի եւ Հայ Աւետարանական Բեթէլ Եկեղեցւոյ հիմնադրութեան 90ամեակը: Այս յոբելեանները նշուեցան զանազան միջոցառումներով՝ նուիրման պաշտամունքով եւ սեմինարներու նախաձեռնութեամբ:

Չդադրեցաւ նաեւ հոգեւոր կեանքը: Իրենց գործունէութիւնը շարունակեցին կիրակնօրեայ դպրոցները, ղօղանջեցին եկեղեցիներու զանգերը, խաղաղ օրերէն աւելի մեծ բազմութեամբ լեցուեցան եկեղեցիները: Իր անխափան աշխատանքը շարունակեց Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնը, ուր կազմակերպուեցան հոգեւոր սեմինարներ, միջեկեղեցական, միջհամայնքային, քոյր եկեղեցիներու միջեւ հանդիպումներ, հաւատքի ու դաւանական հարցերու քննարկումներ, Եւրոպայէն հիւրերու այցելութիւններ: Պատերազմի ամբողջ ընթացքին, հաւատացեալներով օրըստօրէ առաւել յորդող սրահին մէջ, շաբաթական դրութեամբ եղան հովուական դասեր եւ Աստուածաշունչի սերտողութիւններ: Շարունակուեցան տիկնանց, պատանի ասպետներու, Ք.Ջ. Երիտասարդացի պաշտամունքներն ու գործունէութիւնները, գործեց նաեւ Ամառնային Ս. Գրոց Վարժարանը, կազմակերպուեցան ընտանեկան համագումարներ Հալէպի եւ Քեսապի մէջ, Սուրիոյ խաղաղութեան համար յատուկ պաշտամունքներ... առհասարակ եկեղեցւոյ բոլոր բաղադրիչները գործեցին անխափան:

Պատերազմի օրերուն տեղի ունեցաւ Բեթէլ Վարժարանի մանկապարտէզի բաժնի վերանորոգումը: Իսկ 2017 Հոկտեմբերին բացումը կատարուեցաւ Բեթէլ Մանկամսուրին, Բեթէլ Եկեղեցւոյ շրջափակէն ներս: Մեծ շուքով նշուեցան նաեւ Հայ Աւետարանական Արմիս Երաժշտանոցի տասնամեակն ու Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հիմնադրութեան 170ամեակի բարեբաստիկ առիթները:

### **Գ. Յարաբերական**

Պատերազմը արգելք չեղաւ, ընդհակառակը՝ առաւել խթանեց Համայնքային Գործադիր Մարմնի ու համայնքապետի գործնական յարաբերութիւններուն քոյր եկեղեցիներուն, միւս հայ համայնքներուն, պետական պաշտօնական մարմիններուն եւ Հայաստանի պետական

մարմիններուն հետ: Քոյր եկեղեցիներուն հետ եղան համատեղ պաշտամունքներ, ժողովներ ու սեմինարներ, երկրին ու ժողովուրդին դիմագրաւած հարցերու քննարկումներ: Հայ Առաքելական ու Հայ Կաթողիկէ համայնքներուն հետ մշտական համագործակցութիւնը շարունակուեցաւ հոգեւոր, ազգային եւ մշակութային ծիրերէն ներս, իսկ պատերազմի շրջանին ազգին ճակատագիրին վերաբերող բազմազան հարցերու քննարկումներ եղան, ուր աւետարանական համայնքի ներկայացուցիչ-համայնքապետը յաճախ հանդէս եկաւ վճռական կարծիքներով ու առաջարկներով: Առաւել հարուստ ու բազմաբնոյթ եղան պետական մարմիններու հետ յարաբերութիւնները. եղան երկուստեք փոխայցելութիւններ՝ կրօնական, ազգային ու պետական տօներու առիթներով: Պատերազմի ամբողջ տեսողութեան հեքոտ աշխատանք տարուեցաւ համայնքին պատկան մարմիններուն կողմէ՝ պետութեան առջեւ համայնքը, դպրոցն ու Եկեղեցին ներկայացնելու, ծառայող հարցերուն ու դժուարութիւններուն լուծումի ճամփաներ որոնելու նպատակով: Թէ՛ դպրոցը իր փայլուն յառաջընթացին ու յառաջդիմութեան համար, թէ՛ համայնքը իր հաւատարիմ քաղաքացիի կեցուածքով եւ թէ՛ պատկան մարմինները արժանացան պարգէներու եւ գովասանքներու: Այս առումով համայնքապետին ու պատկան մարմիններուն ամէնէն ակնառու ձեռքբերումը եղաւ երկարատեւ ջանքերէ ետք Հալէպի Համալսարանին մէջ հայագիտական ամպիոնի ստեղծումը<sup>6</sup>: Միանգամայն բնական նկատուող յարաբերութիւնները՝ համայնքին եւ Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական մարմիններու, յատկապէս Հալէպի հիւպատոսարանի ու Սփիւքի Նախարարութեան հետ, առաւել խորացան յատկապէս 1993էն սկսեալ, երբ աւետարանական համայնքի ղեկավարութիւնը որոշեց Ալեքիօ Քոլէճին մասնաշէնքերէն մին տրամադրել իբրեւ հիւպատոսարանի շէնք: Այնուհետեւ, 2003ին, գործընթացը նորոգուեցաւ ու հաստատուեցաւ 10 տարուան պայմանաժամով: Տրուած ըլլալով որ պատերազմի միջոցին հիւպատոսարանին շէնքը կ'իյնար վտանգուած գօտիին մէջ, հիւպատոսարանը ժամանաւորապէս փոխադրուեցաւ աւելի ապահով վայր՝ Վիլլաներ Թաղամաս, իսկ 2013ին պայմանաժամը երկարաձգուեցաւ մինչեւ 2038 թուական:

Հայ Աւետարանական Համայնքը յաճախ հիւրընկալած է հայրենի հիւրեր՝ պետական պաշտօնատարներ, գիտութեան ու արուեստի մարդիկ: Նոյնիսկ պատերազմի տարիներուն այդ երեսոյթը չդադրեցաւ: Համայնքապետը յաճախակի առիթներով ընդունեցաւ ՀՀ հիւպատոսները, որոնք միշտ բարձր կը գնահատեն գաղութէն ներս համայնքին գործունէութիւնը:

## ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Թէեւ ներկայիս պատերազմական գործողութիւնները երկրի մեծ մասին մէջ դադրած են, բայց պատերազմին բերած նիւթաբարոյական վնասները բնակչութեան վրայ խոր հետք ձգած են, տնտեսութեան վերականգնումը, ժողովուրդին կենսամակարդակի բարելաւումը ժամանակի կը կարօտին: Հետեւաբար, Հալէպի Հայ Աւետարանական Համայնքին գործունէութիւնը տակաւին նոյն մակարդակով կը շարունակուի: Հակառակ բոլոր անցած կամ յամեցող դժուարութիւններուն՝ թէ՛ համայնքային ղեկավարութիւնը եւ թէ՛ ժողովուրդը խոր հաւատք ունի խաղաղութեան վերահաստատումին եւ միասնական կամքով ու ճիգով կ'աշխատին Սուրիական հայրենիքին ու հայ գաղութին մէջ բնականոն կեանքի վերահաստատումին ի խնդիր:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Կիրակնօրեայ դպրոցը Հայ Աւետարանական Բեթէլ Եկեղեցոյ կարեւոր բաղադրիչներէն է: Անոր անդամ մանուկները ամէն Կիրակի առաւօտեան Կեդրոնին մէջ կ'ունենան պաշտամունք:
- <sup>2</sup> Պատանի ասպետները նոյնպէս կ'ունենան պաշտամունք, զոր կը վարեն եկեղեցոյ հովիւր եւ հինգ առաջնորդներ:
- <sup>3</sup> Սոյն ազգապահպան նպատակը իրագործելու նպատակով, դպրոցաշէնքերը բարեզարդելու եւ կրթական գործը բարձր մակարդակի հասցնելու համար, նիւթական օժանդակութիւն կը յատկացնեն Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը եւ Bible Landsը:
- <sup>4</sup> Երգչախումբը կ'ունենայ սրբազան հոգեւոր եւ ազգային յայտագիրերով համերգեր, հոգեւոր երգերու կատարողութեամբ հանդէս կու գայ եկեղեցոյ մէջ:
- <sup>5</sup> Հաստատութեան հինգ բաժիններուն մէջ՝ սոլֆէժ, ջութակ, սրինգ (Ֆլիւթ), կիթար, դաշնամուր, կը դասաւանդեն որակեալ երաժիշտներ՝ իբրեւ տնօրէն ու երաժշտական ղեկավար ունենալով երաժիշտ-ստեղծագործող Տիկ. Շողակաթ Աբարդեան-Սելիմեանը: Երաժշտանոցին ուժերով կազմակերպուած համերգերէն զատ, յաճախ հայրենիքէն հրաւիրուած խումբեր հանդէս եկած են հոն:
- <sup>6</sup> Բացման արարողութիւնը տեղի ունեցաւ 2008 Յունիսին, բարեկամութիւն խորհրդանշող ծառատնկումի արարողութեամբ:

---

**Brief Report on the Activities of the Armenian Evangelical Community of Syria  
(2005-2017)  
(Summary)**

Rev. Haroutiun Selimian  
hselimian@gmail.com

The Armenian evangelical community of Syria has a significant presence in the Armenian spiritual, cultural and national space of Syria. From the early 1990s, the community was further and more actively incorporated into the Syrian Armenian space. The community is present in Aleppo, Kesab, Homs and Damascus and is administered by the Central Committee of the Near East Armenian Evangelical Church Union, the Administrative Body of the Armenian Evangelical Community and the Educational Council of the Armenian Evangelical Community.

The report highlights the milestones of the community in Syria and describes the socio-cultural, national and spiritual activities of the community prior to and during the war years in Syria.

Prior to the war years considerable emphasis was put on Christian education; school buildings as well as the content and quality of the education and learning provided was revised in line with changes in school structure policies by the ministry of education. Tuition fees and financial aid were revised and a secondary section started in 2009. On the cultural side a music school, library and reading hall were launched in 2006.

War realities, however, imposed a different agenda. The community became geared more towards social and economic relief by providing food, financial help, medical care, everyday life utilities (gas, water, etc.), and it organized gatherings for children and the elderly. An infirmary was inaugurated in 2013. Due to danger in war zones, certain schools were relocated or had to send their students to other schools. Nonetheless, school jubilees were celebrated, yearbooks were published, and both inter- and intra-communal relations and relations with the Republic of Armenia, the Diaspora and the global Christian community were maintained.

In a nutshell, the report emphasizes the fact that against the odds of war the community survived and did its utmost to bear the impact and consequences of the war with strength.